

Տնտեսական զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ տնտեսական վերափոխումների հիմնական ուղղությունների շարքում առանցքային տեղ են զբաղեցնում մակրոտնտեսական կայունության ապահովումը և ներդրումների խթանումը: Ընդ որում՝ պետք է նշել, որ տնտեսական աճի և ներդրումների ծավալի միջև գոյություն ունի սերտ կապ: Ներդրումները կապիտալի ավելացմանը, արտադրության արդիականացմանը և ընդլայնված վերարտադրության ապահովմանն ուղղված տնտեսական ռեսուրսների ամբողջությունն է: Այն կարող է իրականացվել ինչպես հիմնական ֆոնդերի ավելացման, այնպես էլ հաղորդակցության նոր ուղիների շահագործման, շրջանառու միջոցների ընդլայնման և այլ ճանապարհներով:

Անցումային փուլում գտնվող երկրների տնտեսության վերակառուցման և արդիականացման հիմնական խնդիրներից մեկը օտարերկրյա ներդրումների ներգրավումն է: Հաշվի առնելով նման տնտեսությունների զարգացման ցածր աստիճանը և տեխնոլոգիական ետընթացը, կարելի է պնդել, որ օտարերկրյա կապիտալի ներգրավումը կարող է նպաստել նոր տեխնոլոգիաների և կառավարման առաջադեմ մեթոդների ներդրմանը, հայրենական ներդրումների ավելացմանը, որոնք կարելու էր ունեն երկրի տնտեսության առաջընթացի գործում: Ինչպես ցույց է տալիս զարգացող երկրների փորձը, տնտեսության մեջ ներդրումային բունը հատկապես սկսվում է օտարերկրյա կապիտալի ներգրավումից: Մի շարք երկրների սեփական առաջադեմ տեխնոլոգիաների արտադրությունը սկսվեց օտարերկրյա կապիտալի միջոցով ներմուծված տեխնոլոգիաների օգտագործմամբ, իսկ հետագայում այդ երկրներն իրենց դարձան ժամանակակից տեխնոլոգիաներ արտահանողներ: Չարգացող, հատկապես՝ լատինամերիկյան, մի շարք երկրների փորձը վկայում է, որ երկրի ներսում օտարերկրյա ընկերությունների գործունեության համար ոչ բարենպաստ միջավայրը հանգեցնում է պետության կողմից արտաքին փոխառությունների ներգրավման, հետևաբար՝ նաեւ արտաքին պարտքի ծավալների ավելացման: Ընդ որում՝ արտաքին փոխառությունների օգտագործման արդյունավետությունը խիստ ցածր է, իսկ արտաքին պարտքի մեծ ծավալները խոչընդոտում են երկրի տնտեսության զարգացումը: Արտաքին փոխառությունները քաղաքական ճնշման միջոց են և տնտեսական զիջումների պատճառ, այդ թվում նաեւ ներքին շուկայի պաշտպանության ոլորտում: Ըստ եւրոյան՝ ազգային տնտեսության վրա օտարերկրյա կապիտալը կարող է ներգործել տարբեր կերպ: Մի կողմից՝ օտարերկրյա միջոցների ճիշտ և նպատակային օգտագործման դեպքում պետությունը կարող է հաղթահարել տնտեսական ճգնաժամը՝ ինտեգրվելով համաշխարհային տնտեսությանը: Մյուս կողմից՝ արտաքին միջոցների ներգրավումը ձեւավորում է որոշակի պարտավորություններ և հանգեցնում վարկատուից պետության կախվածության աստիճանի խորացման: Այդ իսկ պատճառով շատ պետություններ նախապատվությունը տալիս են տեխնիկական աջակցությանը, որն ուղղված է սեփական ռեսուրսների օգտագործման արդյունավետության և կադրերի որակավորման մակարդակի բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ մոտեցումը հետեւյալն է. նախ անհրաժեշտ է բավարար նախադրյալներ ստեղծել արտաքին միջոցների արդյունավետ օգտագործման համար, որից հետո միայն ձեռնամուխ լինել դրանց ներգրավմանը: Անցումային տնտեսությամբ շատ երկրներ, այդ թվում նաեւ Հայաստանի Հանրապետությունը, օտարերկրյա

կապիտալի ներգրավման կարիք ունեն, ինչը հիմնականում պայմանավորված է բյուջետային միջոցների սահմանափակությամբ, շուկայական հարաբերություններին՝ անցմամբ պայմանավորված՝ ձեռնարկությունների գերակշիռ մասի ֆինանսական միջոցների բացակայությամբ, արտադրության տեմպերի անկմամբ և մի շարք այլ պատճառներով: Պետք է նշել, որ քաղաքակիրթ ու սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսության ձեւավորմանը և բնակչության բարեկեցության շարունակական բարձրացմանն ուղղված օտարերկրյա և տեղական ներդրումային հոսքերի ավելացումը ռազմավարական նշանակություն ունի երկրի տնտեսության համար: Նշված խնդիրը խիստ հրատապ է Հայաստանի Հանրապետության համար: Ակնհայտ է՝ օտարերկրյա ներդրումները կարող են նպաստել հանրապետության գիտատեխնիկական առաջընթացին և տնտեսության տարբեր ոլորտներում կառավարման առաջադեմ փորձի կիրառմանը: Կարելի է պնդել, որ օտարերկրյա կապիտալի ներգրավումը և համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրացումն անհրաժեշտ պայման են երկրում քաղաքացիական հասարակության ձեւավորման համար: Տնտեսության մեջ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին կապիտալի ներգրավումը խիստ կարեւոր է տնտեսական ճգնաժամի հաղթահարման, արտադրության անկման տեմպերի կասեցման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Պետք է նկատի ունենալ, որ պետության և հասարակության շահերը անմիջականորեն չեն համընկնում: Նշված խնդիրը առավել վառ է արտահայտված մեր հանրապետությունում, որը հակված է սեփական արտադրական ներուժի վերականգնմանը և վերականգնմանը, բարձրորակ ու մատչելի ապրանքներով սեփական շուկայի հագեցմանը և կառավարման արեւմտյան առաջադեմ փորձի ներդրմանը:

Ներդրումների ներգրավումը յուրաքանչյուր երկրի, հատկապես անցումային տնտեսության համար ունի առանցքային նշանակություն, որից մեծապես կախված է տնտեսական վերափոխումների բարեհաջող ընթացքը: Դրա ապահովումն իր հերթին ենթադրում է ներդրումային բարենպաստ միջավայրի ձեւավորում, ինչը ներդրումների ներգրավման կարեւոր նախապայման է:

Շուկայական տնտեսությունը, ընդհանուր առմամբ, հիմնվում է տնտեսական գործունեության ազատության վրա, սեփականության իրավունքի պաշտպանության հուսալիության, օրենքների կանխատեսելիության և դրանց պահանջների անվերապահ կատարման վրա: Երկրի տնտեսության վրա ազդող կարեւոր գործոններից մեկն է ներդրումային միջավայրը, որը պայմանավորում է կապիտալ ներդրումների արդյունավետությունը և ինտենսիվությունը: Վերջինները, ակնհայտորեն, շուկայական հարաբերությունների զարգացման բարձր մակարդակը պայմանավորող կարեւոր գործոններից են: Ներդրումային միջավայրը կարելի է սահմանել որպես տվյալ երկրին բնորոշ գործոնների ամբողջություն, որոնք պայմանավորում են տնտեսական գործունեության ընդլայնման ընկերությունների հնարավորությունները և խթանները՝ ներդրումային նախագծերի իրականացման ճանապարհով:

Ներդրումային գործունեության վրա ազդող կարեւոր գործոններից է ներդրումային ռիսկը, որն իր հերթին պայմանավորված է նաեւ ներդրումային միջավայրով: Վերջինը ձեւավորվում է պետության կողմից իրականացվող քայլերի ու միջոցառումների արդյունքում՝ ուղղված սեփականության իրավունքի պաշտպանությանը, հարկման ռեժիմի իրավական կարգավորմանը, ֆինանսական շու-

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ատենախոսության թեմա՝
Ներդրումների խթանման հիմնախնդիրները ՀՀ-ում
Գիտական ղեկավար՝
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Կարեն
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ
տնտեսագիտության
ինստիտուտի
ասպիրանտ



կայի զարգացման խթանմանը, շուկայական ենթակառուցվածքների ձեռավորմանը, ինչպես նաև այնպիսի հիմնականիդրների լուծմանը, ինչպես կոռուպցիան, հանցավորությունը, քաղաքական կայունությունը եւ այլն՝:

Վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվող շարունակական տնտեսական աճը զգալի նպաստեց երկրի տնտեսական ընդհանուր իրավիճակի բարելավմանը, ինչը համապատասխան անդրադարձ ունեցավ նաև ներդրումային միջավայրի բարելավման վրա: Սակայն, դրանով հանդերձ, արձանագրված հաջողությունները դեռևս բավարար չեն մրցունակ տնտեսության ձեռավորման եւ ներդրումային հոսքերի ավելացման համար: Տնտեսական համակարգում դեռևս առկա են մի շարք սահմանափակումներ, որոնց հաղթահարման պարագայում միայն հնարավոր կլինի ակնկալել շոշափելի արդյունքներ ներդրումային հոսքերի ավելացման գործում:

Ներդրումային գրավչության, ինչպես նաև տնտեսական աճի ապահովման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունի երկրում քաղաքական կայունության ապահովումը: Կառավարական մշտական ճգնաժամերը, նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների շրջանում սոցիալ-քաղաքական անկայունությունն անմիջական ազդեցություն են ունենում տնտեսական իրավիճակի, հետեաբար՝ նաև ներդրումային ակտիվության վրա: Քաղաքական կայունությունը, հստակ եւ կայուն օրենսդրական բազան, կանխատեսելի տնտեսական քաղաքականությունը օտարերկրյա կապիտալի ներգրավման կարելու պայման են: Անգամ քաղաքական հարաբերական անկայունության պայմաններում անհրաժեշտ է, որ քաղաքական իրավիճակը լինի կանխատեսելի եւ չունենա վտանգավոր հետեանքներ ներդրումների համար: Քաղաքական անորոշությունը հանգեցնում է տնտեսական գործունեության բոլոր մասերիցների վարքագծի եւ մոտիվների դեֆորմացման: Հատկապես օտարերկրյա ներդրողները գերադասում են մեծ կանխատեսելիություն առաջին հերթին պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների գործընթացում:

Նշված խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի երկրում մշակվող եւ իրականացվող ներդրումային քաղաքականությունը: Դրա հիմքում պետք է ընկած լինեն այնպիսի մոտեցումներ, որոնց գործնական իրացումը հնարավորություն կտա ձեռավորել տնտեսական այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի ներդրումային միջոցների ներգրավմանը:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, ներդրումները տնտեսության առողջացման եւ զարգացման առավել արդյունավետ միջոց են, քան տնտեսական օգնության յուրաքանչյուր այլ ձև: Տնտեսության աճի կատալիզատոր կարող են լինել այն ներդրումները, որոնք ուղեկցվում են բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ, նպաստում են շուկայական ինստիտուտների, հարաբերությունների եւ նորմերի ձեռավորմանը, արդար մրցակցության ապահովմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ տնտեսական համակարգի բնականոն գործունեության այլ խնդիրների լուծմանը: Այս համատեքստում պետության տնտեսական քաղաքականության առավել կարելու ուղղություններից մեկը պետք է դառնա տնտեսության այն ճյուղերի եւ ոլորտների զարգացման համակողմանի աջակցությունը, որոնք առավել գրավիչ կարող են լինել հնարավոր ներդրողների համար՝:

Տնտեսական ընդհանուր քաղաքականության հիմնական ուղղությունների շարքում կարելու պայման առանձնահատուկ է ներդրումային քաղաքականության դերը: Վերջինն անհրաժեշտ նախադրյալ է տնտեսական աշխուժացման, կառուցվածքային վերափոխումների իրականացման, գիտատեխնիկական առաջընթացի ապահովման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման եւ, ի վերջո հաշվով, տնտեսական զարգացման կայուն տեմպերի հաստատման համար: Ներդրումային քաղաքականության կարելու պայմանում հատկապես մեծանում է շուկայական հարաբերությունների անցման փուլում, քանի որ այդ նպատակով իրականացվող տնտեսական վերափոխումները պահանջում են առավել մեծ ծավալի միջոցների առկայություն: Ներդրումային քաղաքականության կարելու պայմանավորված է նաև այն բանով, որ ներդրումները, ըստ էության, իրականացնում են կառուցվածքային կարելու վերափոխումներ: Կախված այն բանից, թե տնտեսության որ ճյուղերում են դրանք տեղաբաշխվում, որոշվում են տնտեսության հետագա զարգացման ուղղությունները:

Ներդրում հասկացությունը բավական տարրորունակ է եւ հա-

ճախ տնտեսագիտության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում: Մեր կարծիքով, զուտ տնտեսագիտական բովանդակությունից ելնելով, ներդրում պետք է համարել հասարակության համախառն ծախսերի այն մասը, որը չի սպառվում տվյալ տարում եւ օգտագործվում է նոր մեքենաների, սարքավորումների, արտադրական ապրանքների, շենքերի, կառույցների, տեխնոլոգիաների ձեռքբերման, բնակարանների շինարարության համար: Փաստորեն՝ ներդրումը ապահովում է գործող կապիտալի աճ:

Տնտեսության եւ՝ միկրո, եւ՝ մակրո մակարդակներում տնտեսական քաղաքականության մակարդակն արտադրության ընդլայնում եւ տեխնոլոգիական վերափոխումների աճ է ապահովում: Բնական է, որ ինչպես առանձին տնային տնտեսությունների, այնպես էլ ամբողջ հասարակության համար ներդրման գործիք է փողը: Հետեապես, ֆինանսական իմաստով, ներդրումը նշանակում է ներկա պահին «բաժանվել» փողից՝ հետագայում եկամուտ ստանալու ակնկալիքով: Այս գաղափարը հատկապես վերաբերում է տնային տնտեսություններին, որովհետեւ փողից հրաժարվելու դրապատճառը եւ ակնկալիքը ապագա եկամտի ստացումն է:

Երբ ներդրման նպատակը դիտարկում ենք մակրոմակարդակով, ապա նպատակը ապագա ստացվող համախառն եկամտի ավելացումն է, սակայն նոր առումով, դա բնակչության աճող պահանջունքները բավարարելու եւ կենսամակարդակը բարձրացնելու խնդիր լուծումն է: Տնտեսագիտական գրականության մեջ ներդրումը թե՛ն միանշանակ մեկնաբանություն չունի, սակայն կարծում ենք՝ դրա բովանդակությունն առավել պարզ երեւում է արտադրական ֆունկցիայի բանաձեւից.

$$Q = f(KI, MT),$$

որտեղ՝ K-ն՝ կապիտալն է, I-ն՝ աշխատանքը, M-ը՝ հողը, T-ն՝ արտադրության տեխնոլոգիան:

Իհարկե արտադրության տեխնոլոգիան կարելի է ներկայացնել որպես գործակից, իսկ արտադրական ֆունկցիան $Q=f(KIM)$ տեսքով մնացորդային եղանակով հաշվելով՝ տվյալ տարում տեխնոլոգիայի բաժին ընկնող ՀՆԱ-ի հավելանք:

Եթե ընդունենք, որ ՀՆԱ-ի քանակը նախորդ տարում եղել է Q մեծություն, իսկ ընթացիկ տարում պետք է հավասարվի Q-ի, ապա Q_1-Q_0 տարբերությունը ΔQ -ն, արդյունք է արտադրության գործունեության մեջ ընթացիկ տարում կատարված ներդրումների (ՀՆԱ-ի ավելացման վրա ազդող մյուս գործոնները հաստատուն լինելու պարագայում):

Այս պարզագույն կախվածությունն է տնային տնտեսություններին եւ ողջ հասարակությանը խրախուսում կատարել ներդրումներ:

Նշվածից չպետք է հետեւություն արվի, թե ներդրումների մեկնաբանության այս մոդելում անտեսված են ռիսկը, տեղեկատվությունն ու ձեռնարկատիրական ունակությունը՝ որպես գործոններ, եւ կատարվող ներդրումները՝ որպես տնտեսական աճի պայման: Դա արված է միայն դիտարկվող խնդրի ավելի պարզ ներկայացնելու նպատակով, բացի այդ՝ նկատի ենք ունեցել, որ տեղեկատվությունը, ձեռնարկատիրական ընդունակությունը եւ ռիսկն արդեն ամրագրված են աշխատանքի՝ որպես արտադրության գործոնի մեջ:

Նշվածից հետեւում է, որ ներդրումների, տնտեսական աճի եւ բնակչության կենսամակարդակի բարձրացման միջե գոյություն ունի ֆունկցիոնալ ուղղակի կախվածություն, որի համար ներդրումը, իր տնտեսագիտական բովանդակությամբ, կարելու է հասարակության տնտեսական զարգացման բոլոր ժամանակաշրջաններում ու աստիճաններում: Դա ներքին օբյեկտիվ օրինաչափություն է՝ բնակչության պահանջունքների աճի, արտադրության որակական ու քանակական նոր աստիճանի, լրացուցիչ ծախսերի, ՀՆԱ-ի սպառվող մասի ավելացման եւ բնակչության կենսամակարդակի բարձրացման շրթայում: Այդ շրթայից երեւում է, որ ներդրումը կախված է մի շարք պայմաններից եւ գործոններից: Դա է պատճառը, որ ներդրումները ստացել են տնտեսագիտական տարբեր մեկնաբանություններ: Այսպես, ըստ կապիտալի անբավարար մակարդակի տեսության, որը բնորոշ է թույլ եւ զարգացող երկրներին, երբ երկրում ընկնում է աշխատանքի արտադրողականությունը, խիստ նվազում են եկամուտները, իսկ դա էլ պատճառ է դառնում ցածր վճարունակության, պակասում է խնայողությունների հնարավորությունը, եւ երկրում ձեռավորվում է ներդրումների անբարենպաստ միջավայր:

Ըստ ներդրումների քելնայան տեսության՝ շեշտը դրվում է արդ-

յունավետ պահանջարկի վրա: Զեյնսը համարում է, որ ցածր եկամուտը եկթադրում է սպառման և խնայողության ցածր մակարդակ, իսկ սպառման ցածր մակարդակը վերածվում է անարդյունավետ պահանջարկի, նեղանում է ներքին շուկան, և նվազում են ներդրումների աճի տեմպերը:

Կարծում ենք, ինչպիսին էլ լինեն ներդրումների մեկնաբանությունները, մենք գործ ունենք մի համակարգի հետ, որը կարելի է ներկայացնել որպես պահանջմուկների աճ, ներդրումների և արտադրության ընդլայնման (աճի) անհրաժեշտություն, ՀՆԱ-ի բաժանում սպառման և կուտակման, կուտակում-ներդրում, տնտեսական իրական աճ և քննադատության կենսամակարդակի բարձրացում պատճառահետևանքային կապով: Բնական է, որ այդ շղթայում կան մի շարք գործոններ՝ ՀՆԱ-ի ծավալ, սպառում, խնայողության կուտակում, առաջարկ, պահանջարկ, որոնք տարբեր կերպ կարող են ազդել ներդրման չափերի և արդյունքների վրա: Գործնական տնտեսավարման խնդիրն է յուրաքանչյուր ժամանակաշրջանում ճիշտ գնահատել իրավիճակը և հաշվել այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը ներդրման ու դրա արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետությունն իր տնտեսական քաղաքականությունը «շուկային թերապիայի» մղումով կենտրոնացրեց գերազանցապես տնտեսական վերափոխումների վրա: Կյո ամենի հետևանքով երկրում առաջացավ ներդրումային ներուժի խիստ պակաս, որի պատճառով սկսեց կարելի լինել արտասահմանյան վարկերի և օգնության դերը, ինչը այսօր դարձել է որքան ավելի անհրաժեշտ, նույնքան՝ վտանգավոր:

Հայաստանի մասնավոր ներդրողներն աստիճանաբար խուսափեցին տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարել և գերադասեցին շրջանառության ոլորտը, հատկապես՝ առևտուրը, խախտվեց ներդրումների «այսօր ներդնել՝ ապագայում ավելի մեծ եկամուտ ստանալ» և տնտեսական աճի ավելի կայուն հիմք ունենալու սկզբունքը, որի փոխարեն տարածում ստացավ «այսօր ներդնել և այսօր եկամուտ ստանալ» սկզբունքը: Վերջինը հանգեցրեց շրջանառության ոլորտում մի շարք ապրանքների առևտրի մենաշնորհի:

«Ներդրումային միջավայր» հասկացությունը արտացոլում է որեւէ երկրում (տարածաշրջանում) ձեռավորված իրողության բարենպաստությունը հնարավոր ներդրումների նկատմամբ: Յուրաքանչյուր երկրում բազմաբնույթ ներդրումների ներգրավման ծավալներն ու կառուցվածքը մեծապես կախված է տվյալ երկրի ներդրումային միջավայրից:

Ներդրումների ներգրավման տեսանկյունից կորպորատիվ կառավարման մակարդակը կարելի է այն առումով, որ հնարավոր ներդրողները կարիք ունեն ամբողջովին և հստակ իմանալ թե կառավարչական ինչ սկզբունքներով է գործում այս կամ այն ձեռնարկությունը, ով է դրա սեփականատերը, և ինչպիսին է նրա ղեկավարման արդյունավետության մակարդակը, որպեսզի սեղծ ժամկետներում և առանց Նշանակալի ծախսերի ներդրում կատարելու որոշում ընդունեն¹:

Հայաստանում գործող ձեռնարկությունների մեծամասնությունում կորպորատիվ կառավարումը ցածր մակարդակի վրա է: Շատ դեպքերում ոտնահարվում են ընկերությունների փոքր և միջին բաժնետերերի շահերը: Ընկերությունների գործունեության թափանցիկության բացակայությունն ու ստվերայնությունը բաժնետերերին մղում են այն բանին, որ նրանք ցանկանում են ամեն կերպ ձեռքագաղթել իրենց բաժնետոմսերից: Իսկ ընկերությունների իրական արժեքի բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ բաժնետերերն իրենց բաժնետոմսերը վաճառում են հիմնականում շուկայական արժեքից զգալի ցածր գնով: Կյս պարագայում շահում են խոշոր սեփականատերերը, որոնք ի պաշտոնե իրենց հասու տեղեկատվությամբ, կարող են գնահատել ընկերության իրական արժեքը, որի արդյունքում տեղի է ունենում կապիտալի կենտրոնացում:

Բացի վերը նշվածից, կորպորատիվ կառավարման հարցում գոյություն ունի մեկ այլ խնդիր: Ձեռնարկությունների վերակառուցումը հետխորհրդային մենեջերների համար բավական ղժվար է, քանի որ նրանք ունեն նոր հմտությունների կարիք՝ նոր շուկաների, գործընկերների և գործարարության նոր ձևերի հետ շփվելու համար:

Հայաստանի բանկային համակարգը, շնորհիվ ԿԲ-ի խիստ վերահսկողության, կարելի է համարել տնտեսության կայացած ենթակառուցվածք: Կատարվող դրամական փոխանցումների օպերատիվության առումով ՀՀ բանկային համակարգը բավական զարգացած է: Բանկերի մեծամասնությունը միջազգային փոխանցումներ կատարում է 2-4 օրվա ընթացքում: Ավելի արագ փոխանցումները հնարավոր են Western Union, Money Gramm և ՀՀ տարածքում գործող՝ դրամական փոխանցումների այլ համակարգերի միջոցով:

Տնտեսության երկարաժամկետ վարկավորումը իրականացվում է հիմնականում միջազգային ֆինանսական կազմակերպություններից՝ Նպատակային ներգրավված միջոցներով տրամադրվող վարկային գծերի հաշվին: Ներկայում Հայաստանում գործող բանկերի մեծ մասը սպասարկում է Հաշվային բանկի «Եվրասիա» հիմնադրամի, UMCOR-ի կազմակերպության, OXFAM-ի հայաստանյան մասնաճյուղի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, ԱՄՆ գյուղդեպարտամենտի, Հունաստանի ապրանքային վարկային գծի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, «Շորբանկ» բանկային հոլդինգի կողմից իրականացվող վարկային ծրագրերը, որոնք ընդգրկում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները²:

Սակայն տնտեսության վարկավորման հարցում դեռևս գոյություն ունի որոշակի հիմնախնդիր: Վարկային ակտիվների կազմում փոքր է բանկերի միջոցներից տրվող երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը, վարկային պորտֆելում նկատելի է ճյուղային անհավասարակշռություն (բանկերը հիմնականում վարկավորում են առևտրի, քիմիական, գյուղատնտեսության, սննդի ճյուղերին պատկանող կազմակերպությունները), այդ միջոցները բավական թանկ են՝ միջազգային շուկայում վարկային միջոցների արժեքի համեմատ: Սակայն վերջին խոչընդոտող ոչ թե արմատական տնտեսական խնդիրների աղբյուր է, այլ ներքնշյալ խնդիրների հետևանք:

● Պահանջարկի խոչընդոտները՝ գործարար ծրագրերի որակը, վարկառուների հրապարակայնության ցածր մակարդակը, պատշաճ կերպով չզգրանցված գույքային իրավունքները ցույց են տալիս, որ փաստացի առկա են ֆինանսավորման շատ ավելի մեծ հնարավորություններ (միջազգային վարկային գծեր), քան իրականում օգտագործվում են:

1. G. De Jonquieres, *Merchantlists Are Treading on Thin Ice*, *Financial Times*, July 3, 1996, p. 16.

2. *Курс экономики, Под. ред. Б.А. Рауэберга, М. 2001, с. 31.*

3. P. Нуреев, *Модель экономического роста с двумя дефицитами*, *Вопросы экономики*, #4, 2000, с. 156-164.

4. *Доклад о мировых инвестициях 2001: содействие развитию и связи*, *Обзор, ЮНКТАД, Нью-Йорк и Женева 2001, с. 1.*

5. *Курс экономики, указ. изд., с. 31.*